

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2019 թվականի սեպտեմբերի 13-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 9-րդ Ա դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասուղի Լեյլի Հովհաննիսյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Ջոյա Գևորգյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն:
2. Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:
3. Ծնողագուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու, աշակերտների հանգիստը և ժամանցը նպատակային կազմակերպելու հարցը:
4. Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

1. Լսեցին- Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ 9-րդ<sup>ա</sup> դասարանի ղեկավար Լեյլի Հովհաննիսյանը, որը ներկայացրեց ծնողական խորհրդի ընտրության կարգը:

Առաջարկվեց նոր՝ 2019-2020 ուսումնական տարվա համար ձևավորել դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով: Առաջարկվեց նշել մնացած չորս անդամների թեկնածուներին ևս: Առաջարկվեց 5 անդամների թեկնածություն: Նախագահի թեկնածու առաջադրվեց Տաթևիկ Աբրահամյանը: Կատարվեց քվեարկություն: 24 կողմ, 0 դեմ ձայներով ծնողական խորհրդի նախագահ ընտրվեց Տաթևիկ Աբրահամյանը:

Որոշեցին.

9-րդ Ա դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով.

1. Տաթևիկ Աբրահամյան /նախագահ/
2. Հովհաննիսյան Իրինա Աշոտի /անդամ/
3. Ավետիսյան Քրիստինե Վալերիի /անդամ/

4. Գրիգորյան Լիլիթ Վարուժանի /անդամ/  
5. Գինոսյան Գոհար Սարոյի /անդամ/

2. Լսեցին - Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:

Դասղեկ Ն. Հովհաննիսյանը նշեց, որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների դաստիարակության հիմնախնդիրների լուծման հարցում: Նա հորդորեց ծնողներին աջակցել դպրոցին, ուսուցիչներին՝ պարտադիր կրթություն իրականացնելու, սովորողներին ուսուցման և դաստիարակության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու համար: Դասավանդող ուսուցիչներին և դասղեկին օգնել՝ ձեռք բերելու կրթության գործընթացի արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ տեղեր, գրենական պիտույքներ և ժամանակին վճարել դասագրքերի վարձավճարները:

Որոշեցին – Օգնել դասղեկին և ուսուցիչներին՝ ձեռք բերելու անհրաժեշտ տեղեր և կազմակերպված իրականացնել դասագրքերի վարձավճարների հավաքագրումը:

3. Լսեցին - Ծնողագուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու, աշակերտների հանգիստը և ժամանցը նպատակային կազմակերպելու հարցը:

Դասղեկ Ն. Հովհաննիսյանը նշեց, որ բոլոր դասարաններում էլ կան սոցիալապես անապահով և ծնողագուրկ երեխաներ, որոնց դասագրքերի վարձավճարների համար օգնություն է տրամադրվում դպրոցի կողմից: Սակայն ուսումնասովանողակ նյութերի ձեռքբերման, էքսկուրսիաներ, թատրոն, թանգարաններ այցելությունների ժամանակ նույնպես անհրաժեշտ է ապահովել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ներկայությունը: Չնայած նրան, որ մշակութային օջախներ այցելությունների համար ՀՀ ԿԳՄՄ նախարարությունը տարեկան մեկական այցելության անվճար հնարավորություն է տրամադրել դպրոցականների համար, տրանսպորտի և սննդի համար էլ են գումարային ներդրումը կատարում են ծնողները: Անապահով ընտանիքների երեխաների ընդգրկվածությունը կոլեկտիվին, ընկերների հետ շփումները ապահովելու և նրանց տարիքային հոգեբանական զարգացումը ապահովելու համար որոշակի գումարային ներդրումներով ավելի ապահով վիճակում գտնվող ծնողները կարող են իրենց երեխաների մոտ ապահովել հասակակիցների նկատմամբ ճիշտ մարդկային հարաբերությունների ձևավորումը, քանի որ դա գտնվում է նաև ծնողական խորհրդի կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Որոշեցին -

Անհրաժեշտ օգնություն ցուցաբերել նաև տարվա ընթացքում իրականացվող միջոցառումների ժամանակ:

4. Լսեցին - Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

Ընթացիկ հարցերը քննարկելիս դասուղեկը ներկայացրեց դպրոցի կանոնադրությունը՝ կապված դպրոցական ռեժիմի, դասացուցակի, դասարանում կատարվող հերթապահության և այլ հարցերի վերաբերյալ: Նշվեց, որ դպրոցն աշխատում է հնգօրյա ռեժիմով, դասերն սկսվում են ժամը 9<sup>00</sup>-ին, ավարտվում՝ 15<sup>00</sup>-ին: Նա ծնողներին հորդորեց լինել հետևողական իրենց երեխաների նկատմամբ ժամանակին դպրոց հաճախելու և դասերին միշտ պատրաստ լինելու հարցում, ենթարկվեն դպրոցի ներքին կարգապահական կանոններին և աշակերտավայել վարք դրսևորեն դպրոցում:

Պետք է մշտապես պահել ծնող-դասուղեկ-աշակերտ կապը և անհրաժեշտության դեպքում այցելել դպրոց՝ իրենց երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու, աշակերտների վարքը և ուսման առաջադիմությունը բարձր մակարդակի հասցնելու համար, որ աշակերտները դպրոց հաճախեն ժամանակին ու պայուսակով, դասագրքերով, գրենական պիտույքերով ու աշակերտին վայել հագուկապով:

Որոշեցին .-Առավել ուշադիր և հետևողական լինել անցումային տարիք և հոգեբանական բարդություններ ունեցող աշակերտների հանդեպ:

Ծնողական խորհրդի նախագահ՝  
Քարտուղար՝

Սաթևիկ Աբրահամյան  
Հովհաննիսյան Իրինա